ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

GVT/COM/V(2023)002

Հայաստանի կառավարության մեկնաբանությունները՝ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան Հայաստանի կողմից կիրարկելու մասին Խորհրդատվական կոմիտեի հինգերորդ կարծիքի վերաբերյալ

(ստացված՝ 2023 թվականի փետրվարի 8-ին)

Հայաստանի Հանրապետության կառավարության դիտարկումները՝ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան Հայաստանի կողմից կիրարկելու մասին Խորհրդատվական կոմիտեի հինգերորդ կարծիքի վերաբերյալ

ԿԱՐԾԻՔ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
Եզրահանգումների ամփոփ նկարագիրը. **Արտահայտվելու ազատություն**	
Պարբերություն 2 Մոնիթորինգի վերջին փուլի ընթացքում ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ օրենսդրության եւ դրա արդյունավետ իրականացման ոլորտում նկատվել է սահմանափակ առաջընթաց: Իշխանություններն ընդգծել են, որ ՔՈՎԻԴ-19 համաճարակի եւ 2020 թվականին Լեռնային Ղարաբաղի հակամարտության պայմաններում ռազմական գործողությունների բռնկման համատեղ ազդեցությունը նպաստել է ազգային փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում օրենսդրական անգործությանը: Բացի այդ, Խորհրդատվական կոմիտեն նկատել է, որ հակամարտությունը բացասաբար է ազդել մարդու իրավունքների, այդ թվում՝ փոքրամասնությունների իրավունքների իրականացման վրա:	Սահմանված ժամկետում իրականացվել են պետության կողմից նախատեսված բոլոր պլանավորված աշխատանքները՝ բացի անհաղթահարելի ուժով պայմանավորված իրավիճակներից, որոնք առաջացել են նշված խնդիրների պատճառով, որոնք օբյեկտիվորեն թույլ չեն տվել աշխատել ավելի արդյունավետ:

Պարբերություններ 3, 8, 99-104 ...եզդի իրավապաշտպան Սաշիկ Սուլթանյանի դեմ հարուցված քրեական վարույթ. ...գործի վերջին զարգացումների առնչությամբ. ... մարդու իրավունքների միջազգային եւ ազգային դերակատարների, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի եւ այլոց՝ Սաշիկ Սուլթանյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդման առնչությամբ լուրջ մտահոգությունների մասով:	**Գործի հանգամանքները փոխվել են (տե՛ս ստորեւ)** «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն» ՀԿ-ի նախագահ Սաշիկ Սուլթանյանի գործի առնչությամբ կցանկանայինք վերահաստատել ԱՓՇԿ հարցերով Խորհրդատվական կոմիտեի փորձագետների հետ Երեւանում տեղի ունեցած հաղորդակցության ընթացքում ներկայացված պաշտոնն այն առումով, որ Սուլթանյանը ո՛չ Հայաստանի եզդիական համայնքի կողմից հանդես եկող մարդու իրավունքների պաշտպան է, ո՛չ էլ հայտնի անձնավորություն: Բազմաթիվ եզդիների կողմից նա արժանացել է քննադատության (Իրաքի Հանրապետությունում գործող yezidinews.com կայք, 2020 թվականի հունիսի 8-ին տված հարցազրույց)՝ Հայաստանի իշխանությունների կողմից եզդի փոքրամասնության նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի եւ խտրականության մասին օտարերկրյա ՋԼՄ-ների միջոցով ապատեղեկատվություն տարածելու՝ այդպիսով հայերի եւ եզդիների միջեւ ազգային թշնամություն հրահրելու համար:
	Քրեական գործի նախաքննությունն ավարտվել է, մեղադրական եզրակացությունը հաստատվել է հսկող դատախազի կողմից, իսկ քրեական գործը 2021 թվականի օգոստոսի 2-ին ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննության համար: 2022 թվականի հուլիսի 18-ին կայացած հերթական դատական նիստում Սաշիկ Սուլթանյանի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել Ս.Սուլթանյանի նկատմամբ ՍԷԿՏ համակարգում գործող սահմանափակումները 2022 թվականի հուլիսի 20-ից մինչեւ 2022 թվականի հուլիսի 26-ն ընկած ժամանակահատվածում, այդ թվում նաեւ 2022 թվականի օգոստոսի 20-ից մինչեւ 2022 թվականի սեպտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում ժամանակավորապես կասեցնելու պահանջով՝ հաշվի առնելով նաեւ այն դիտարկումը, որ Ս. Սուլթանյանը հրավեր է ստացել մասնակցելու «Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի» կողմից կազմակերպված, Փարիզում կայացած «Մարդու իրավունքների ապագան, ապագայի մարդու իրավունքները» համաժողովին եւ ԱՄՆ կառավարության կողմից կազմակերպված «Միջազգային այցելուների առաջնորդության ծրագրին»: Հաշվի առնելով, որ Սաշիկ Սուլթանյանը հրավերները ստացել է միջազգային գործընկեր կազմակերպություններից, մեղադրողը միջնորդության դեմ առարկություններ չի ունեցել, եւ պաշտպանության կողմի միջնորդությունը բավարարվել է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2022 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ:

	2022 թվականի օգոստոսի 8-ին եւ հոկտեմբերի 26-ին նշանակված դատական նիստերը չեն կայացել Սաշիկ Սուլթանյանի բացակայության պատճառով: Դատարանի հարցմամբ պարզվել է, որ 2022 թվականի հուլիսի 24-ին Ս.Սուլթանյանը լքել է Հայաստանի Հանրապետությունը: Փաստորեն Սաշիկ Սուլթանյանը ներկայումս թաքնվում է քրեական վարույթն իրականացնող մարմնից՝ դրանով իսկ խոչընդոտելով գործի դատական քննությունը: Քանի որ նրա չներկայանալն առանց հարգելի պատճառի է, եւ նա խուսափում է քրեական պատասխանատվությունից, վարույթն իրականացնող մարմինը 2022 թվականի հոկտեմբերի 26-ի դատական նիստում միջնորդություն է ներկայացրել նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը կալանքով փոխարինելու եւ նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին: Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 26-ի իր որոշմամբ բավարարել է մեղադրող կողմի միջնորդությունը:
Խտրականության վերաբերյալ օրենսդրական եւ ինստիտուցիոնալ շրջանակ. իրավահավասարության վերաբերյալ տվյալներ **Խտրականության դեմ պայքարի օրենսդրական եւ ինստիտուցիոնալ շրջանակ**	
Պարբերություններ 5, 50 ... խտրականությունն արգելող համապարփակ օրենսդրական դաշտի բացակայություն. ... 2016 թվականին «Իրավահավասարության մասին» օրենքի նախագծի մշակման, բայց ոչ ընդունման վերաբերյալ մեկնաբանություն:	«Ազգային փոքրամասնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Իրավահավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի եւ հարակից օրենքների նախագծերի ընդունումն ամրագրվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ եւ դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով: Ինչ վերաբերում է ՔՈՎԻԴ-19 համաճարակին եւ 2022 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի (Արցախի) դեմ սանձազերծված ագրեսիային, որոնք հանգեցրին հումանիտար ճգնաժամի, նախագծերի ընդունման ժամկետը երկարաձգվել է: Օրենքների ընդունումը քննարկման փուլում է:
Պաշտպանություն գենդերային հիմքով բռնությունից	
Պարբերություն 7 ... Եզդի աղջիկների վաղաժամ եւ հարկադիր ամուսնությունները, որոնք Հայաստանում շարունակում են մտահոգիչ լինել:	2021-2022 թվականներին Հայաստանի ոստիկանության ներկայացուցիչները ներգրավվել են «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն» ՀԿ-ի կողմից անցկացված աշխատաժողովին եւ մասնակցել աշխատաժողովին՝ Հայաստանի Հանրապետությունում Նիդեռլանդների թագավորության դեսպանատան օժանդակությամբ իրականացվող «Վաղ ամուսնությունների կանխարգելումը որոշում կայացնողների եւ եզդիական համայնքի համագործակցության միջոցով» ծրագրի շրջանակներում: Նշված ծրագրի շրջանակներում մշակվել է այլընտրանքային ռազմավարական փաստաթուղթ եւ ճանապարհային քարտեզ՝ ուղղված եզդիական համայնքում վաղ ամուսնությունների կանխարգելմանը: Նույն

	ծրագրի շրջանակներում մշակվել է նաեւ վաղ ամուսնության դեպքերի հետ արդյունավետ աշխատանքի ձեռնարկ, որն օգտագործվել է 2022 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին Արմավիրի մարզի, Կոտայքի մարզի եւ Արարատի մարզի համայնքների սոցիալական աշխատողների, Խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի անդամների, ինչպես նաեւ Ոստիկանության՝ անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստման դասընթացների ժամանակ: Դասընթացի նպատակը եզդիական համայնքներում վաղ ամուսնությունների կանխարգելման ուղղությամբ իրենց պարտականությունները կատարող պետական ծառայողների կարողությունների զարգացումն էր:
Պաշտպանություն գենդերային հիմքով բռնությունից	
Պարբերություններ 7, 80 … Եզդի աղջիկների վաղաժամ եւ հարկադիր ամուսնությունները Հայաստանում շարունակում են մտահոգիչ լինել. ….Խորհրդատվական կոմիտեի զրուցակիցներն այս առումով ընդգծել են իշխանությունների՝ բոլոր մարդկանց վնասներից պաշտպանելու եւ կրթության իրավունքն ապահովելու դրական պարտավորությունները: Որոշ զրուցակիցներ հայտարարել են, որ նույնիսկ առերեւույթ ապացույցների առկայության դեպքում պետությունը չի կատարում իր դրական պարտավորությունները:	Խորհրդատվական կոմիտեի կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Հինգերորդ կարծիքի 7-րդ եւ 80-րդ կետերով նախատեսված եզրակացությունների հիմքում ընկած տվյալները ծայրահեղ միակողմանի են: Դրանք չեն արտացոլում ո՛չ քրեական արդարադատության ոլորտում կառավարության կողմից ձեռնարկված միջոցների իրական վիճակը, ո՛չ էլ ներկայացնում են խնդրի էությունը: Եվ խնդիրն այն է, որ եզդի աղջիկների վաղաժամ եւ հարկադիր ամուսնությունները, որպես կանոն, եզդի աղջիկների առեւանգումն իրականացնում են եզդի տղամարդիկ՝ նույնիսկ համայնքի ներսում «ամուսինների» ծնողների փոխադարձ համաձայնության վրա հիմնված վաղաժամ ամուսնությունների դեպքում: Այդ դեպքերը թաքցվում են իրավապահ մարմիններից եւ բացի այդ, բացահայտվելուց հետո եզդիական համայնքի ներկայացուցիչների կողմից արդարացվում են որպես ազգային սովորույթներ: Քրեական գործերից մեկով, որով ամուսնության նպատակով անչափահաս եզդի աղջկա առեւանգմանը մասնակցած խմբի բոլոր անդամների նկատմամբ պատիժ էր նշանակվել, պաշտպանյալներն իրենց գործողությունները հիմնավորել են ազգային սովորույթներով՝ այս փաստարկը ներկայացնելով նաեւ վճռաբեկ բողոքում: Մի խումբ անձանց կողմից անչափահասին առեւանգելու հանցագործության հատկանիշների մասով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ «(…) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29 հոդվածով սահմանվում է հետեւյալը. «Խտրականությունը, կախված (…) ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, (…) արգելվում է»: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-րդ հոդվածի համաձայն՝ «Կանայք եւ տղամարդիկ իրավահավասար են»: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն՝

	1. «Ամուսնական տարիքի հասած կինը եւ տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու եւ ընտանիք կազմելու իրավունք ունեն: (.) **2.** Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը եւ տղամարդն ունեն հավասար իրավունքներ(.)»: Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ «(...) **3.** Կանայք եւ տղամարդիկ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս օգտվում են հավասար իրավունքներից: **4.** Ընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացվում է տղամարդու եւ կնոջ ամուսնական դաշինքի կամավորության (...) սկզբունքին համապատասխան: **5.** Ամուսնանալիս եւ ընտանեկան հարաբերություններում արգելվում է սոցիալական ծագման, ռասայի, ազգային պատկանելության, լեզվի կամ կրոնի հատկանիշներով քաղաքացու իրավունքների ցանկացած սահմանափակում (...) »: ՄԱԿ-ի՝ 1948 թվականին հռչակված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ամուսնությունը կարող է կնքվել միայն ամուսնացող երկու կողմերի ազատ ու լիակատար համաձայնության դեպքում»: «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» ՄԱԿ-ի 1979 թվականի կոնվենցիայի (ԿՆԽՎԿ) 5-րդ հոդվածով սահմանված է հետեւյալը. «Կողմ պետությունները ձեռնարկում են բոլոր պատշաճ միջոցները՝ (ա) փոխելու տղամարդկանց ու կանանց վարքագծի սոցիալական եւ մշակութային մոդելները՝ նախապաշարմունքների ու սովորույթների եւ բոլոր այլ պրակտիկաների վերացմանը հասնելու նպատակով, որոնք հիմնված են այս կամ այն սեռի ստորադասության կամ առավելության կամ տղամարդկանց ու կանանց կարծրատիպային դերի գաղափարի վրա (...)»: Նույն Կոնվենցիայի 16-րդ հոդվածի համաձայն՝ «**1.** Կողմ պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունն ամուսնությանն ու ընտանեկան հարաբերություններին վերաբերող բոլոր հարցերում եւ մասնավորապես՝ տղամարդկանց ու կանանց հավասարության հիման վրա ապահովում են՝

	ա) ամուսնություն կնքելու միեւնույն իրավունքը, բ) ազատորեն ամուսին ընտրելու եւ միայն իր ազատ ու լիակատար համաձայնությամբ ամուսնանալու միեւնույն իրավունքը, գ) ամուսնության ընթացքում եւ ամուսնալուծվելիս միեւնույն իրավունքներն ու պարտականությունները (...)»:
	Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Հարկադիր ամուսնությունների եւ երեխաների ամուսնությունների մասին» 2005 թվականի թիվ 1468 Բանաձեւի 3-6-րդ կետերով սահմանված է, որ «Այն վրդովված է այն փաստից, որ կան իշխանություններ, որոնք միգրանտ համայնքների մշակույթի եւ ավանդույթների նկատմամբ հարգանքի քողի տակ հանդուրժում են հարկադիր ամուսնությունները եւ երեխաների ամուսնությունները, թեեւ դրանցով խախտվում են տուժած անձանցից յուրաքանչյուրի եւ յուրաքանչյուր տուժած անձի հիմնարար իրավունքները: Վեհաժողովը հարկադիր ամուսնություն է համարում երկու անձանց այնպիսի միությունը, որի դեպքում այդ անձանցից առնվազն մեկը ամուսնության համար չի տվել իր լիարժեք եւ ազատ համաձայնությունը: Քանի որ դրանով խախտվում են անհատի՝ մարդու հիմնարար իրավունքները, ապա հարկադիր ամուսնությունը որեւէ կերպ չի կարող արդարացվել: Վեհաժողովն ընդգծում է «Ամուսնության եւ ընտանիքի հետ կապված որոշակի սովորույթների, հնագույն օրենքների եւ գործելակերպերի մասին» Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1954 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 843 (IX) բանաձեւի՝ ՄԱԿ-ի կանոնադրության մեջ եւ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում շարադրված սկզբունքների հետ անհամապատասխանության կարեւորությունը: **Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի՝ «Ռ. Բրոյանը եւ մյուսները» գործով 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԱՐԱԴ1/0023/01/15 որոշումը** Ներքին օրենսդրությամբ, ինչպես նաեւ միջազգային պայմանագրերով եւ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային այլ փաստաթղթերով ամրագրված վերոնշյալ դրույթների համակցված վերլուծության հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը պնդում է, որ ամուսնությունն ընտանիք ձեւավորելու նպատակով տղամարդու եւ կնոջ կամավոր միությունն է: Կինը պետք է ազատորեն արտահայտի իր կամքը ամուսին ընտրելու եւ ընտանիք կազմելու հարցում, եւ բացի այդ, այս հարցում սոցիալական, ռասայական, ազգային, լեզվական կամ կրոնական պատկանելության վրա հիմնված իրավունքների ցանկացած սահմանափակում արգելվում է: Ամուսնական միություն կազմող անձինք ունեն հավասար իրավունքներ եւ պարտականություններ: Այսինքն՝ ամուսնանալիս ամուսնացողներից յուրաքանչյուրը պետք է դրսեւորի գիտակցված եւ կշռադատված ցանկություն, համաձայնությունը պետք է տրվի ազատ եւ անկախ՝ առանց սպառնալիքի, բռնության կամ հարկադրանքի ազդեցության: Ուստի, հաշվի առնելով այս իրավահարաբերության բնույթն ու նշանակությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առեւանգումը, որը կատարվել է անձի՝ սեփական կամքի ազատ արտահայտմամբ ամուսին

	ընտրելու, ամուսնանալու իրավունքը սահմանափակելու նպատակով, վկայում է կատարված հանցագործության՝ հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ այս հանգամանքն ինքնին չի կարող համարվել որպես նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելն աննպատակահարմար համարելու պայման: Նշված խնդիրները լուծելիս յուրաքանչյուր գործով դատարանի եզրակացություն, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հիմնված լինի խնդրո առարկա հանցավոր արարքի վրա ազդող բոլոր գործոնների եւ հանցանք կատարած անձի՝ հանրային վտանգավորության աստիճանի ամբողջական գնահատման վրա: Ավելին, այն պետք է հիմնված լինի նաեւ այնպիսի հանգամանքների վրա, ինչպիսիք են նախքան հանցագործություն կատարելը տուժողի եւ հանցանք կատարած անձի միջեւ բարիդրացիական հարաբերությունները, տուժողի դրական վերաբերմունքը հանցանք կատարած անձի նկատմամբ, հանցագործությունը կատարելուց հետո տուժողի եւ պաշտպանյալի միջեւ ձեւավորված հարաբերությունների բնույթը եւ այլն (...)» (տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի՝ «Ռ. Բրոյանը եւ մյուսները» գործով 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԱՐԱԴ1/0023/01/15 որոշման 17.1-17.2 կետերը): Վերոնշյալ վերլուծության արդյունքում Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը մերժել է վճռաբեկ բողոք ներկայացրած անձանց՝ ազատազրկման ձեւով պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին պահանջը: Ավելին, անդրադառնալով վճռաբեկ բողոք ներկայացրած անձանց այն փաստարկին, որ իրենց արարքը պայմանավորված է եղել ազգային սովորույթներով, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ «(.)հանցագործության կատարման նպատակը այս գործով որպես ազգային սովորույթ ներկայացնելը չի կարող վկայել կատարված հանցավոր արարքի ավելի նվազ վտանգավորության մասին, հետեւաբար վճռաբեկ բողոք ներկայացրած անձի փաստարկներն այդ մասով հիմնավորված չեն (.)» (տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի՝ «Ռ. Բրոյանը եւ մյուսները» գործով 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԱՐԱԴ1/0023/01/15 որոշման 21-րդ կետը):
Խտրականության վերաբերյալ օրենսդրական եւ ինստիտուցիոնալ շրջանակ. իրավահավասարության վերաբերյալ տվյալներ	
Պարբերություն 11 ... եզդիերենի ուսուցումն առաջարկվում է միայն որպես ուսումնական ծրագրից դուրս դասավանդվող առարկա:	Արագածոտնի մարզում, որտեղ կան եզդիների պարփակ բնակավայրեր, տեղի հանրակրթական դպրոցներում եզդիերենը դասավանդվում է որպես ուսումնական ծրագրի մաս:

Արդյունավետ մասնակցություն	
Պարբերություն 12 Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդը շարունակում է մնալ այն միջնորդը, որի միջոցով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պաշտոնական երկխոսություն են վարում իշխանությունների հետ: Այս Խորհրդին միանալու պահանջները կարող են սահմանափակող բնույթ ունենալ ցանկացած այնպիսի փոքրամասնությունների համար, որոնք հայցում են ճանաչում համեմատաբար վերջին ժամանակներում:	Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար որպես միջնորդ կարող է հանդես գալ նաեւ Վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի բաժինը:
«Ընդլայնման» գործընթացում վարչական եւ տարածքային բարեփոխումների վերաբերյալ խորհրդակցությունների բացակայությունը մտահոգիչ է: Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ այդպիսի որոշումներ կայացնելիս ազգային փոքրամասնությունների հետ արդյունավետ խորհրդակցությունը կարեւոր է:	Ընդլայնման գործընթացների վերաբերյալ քննարկումներ եւ լսումներ անցկացվել են միաձուլման ծրագրերում ընդգրկված բոլոր համայնքներում եւ բոլոր այն համայնքներում, որտեղ կան ազգային փոքրամասնություններ: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները քննարկումներին մասնակցել են թե՛ որպես շահառու համայնքի բնակիչներ, թե՛ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, ինչպես նաեւ արտահայտել են իրենց կարծիքը:
Հետագա առաջարկություններ	
Պարբերություն 27 ... Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին հավաքելու տվյալներ՝ ազգային փոքրամասնությունների սոցիալ-	Աշխատաշուկայի վիճակագրության հիմնական աղբյուրն Աշխատուժի հետազոտությունն է, որը որոշակի ընտրանքային մեթոդով ընտրված տնային տնտեսությունների վիճակագրական ուսումնասիրություն է: Ուսումնասիրությունն իրականացվում է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից առաջարկված մեթոդաբանությամբ եւ ընթացակարգով: Հայաստանի Հանրապետության վերջին մարդահամարի (2011թ.) արդյունքներով ազգային

տնտեսական իրավիճակի վերաբերյալ, հատկապես՝ զբաղվածության, համապատասխան ենթակառուցվածքների հասանելիության եւ կլիմայի փոփոխության ազդեցության ոլորտներում:	փոքրամասնությունները կազմում են բնակչության 2%-ը, մինչդեռ Աշխատուժի հետազոտությունը պատահական հետազոտություն է, եւ համեմատաբար ցածր տարածվածություն ունեցող երեւույթներն օբյեկտիվորեն ունեն ընտրության մեջ ընդգրկված լինելու փոքր հավանականություն, հետեւաբար նրանք ունեն համապատասխան տվյալների ցածր հուսալիություն: Ելնելով վերոհիշյալից՝ Աշխատուժի հետազոտության հարցաթերթում էթնիկ ծագման վերաբերյալ հարց նախատեսված չէ: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության 2022 թվականի մարդահամարի՝ խնդրո առարկայի մասով արդյունքներով պայմանավորված՝ Աշխատուժի հետազոտության հարցաթերթը կարող է համապատասխանաբար վերանայվել՝ աշխատաշուկայում էթնիկ փոքրամասնությունների ներգրավվածության աստիճանի վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն տրամադրելու համար:
Կիրառության շրջանակը	
Պարբերություն 35 ... 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո Ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհուրդը՝ 11 առավել մեծ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հիմնական ֆորումը, դադարեցրեց Հայաստանի նախագահի աշխատակազմին առընթեր իր գործունեությունը. . Խորհրդատվական կոմիտեն վերահաստատում է, որ այս կազմը նրանց տալիս է ավելի մեծ ընդգրկվածություն եւ կանոնավոր միջոցների հասանելիություն՝	Մինչեւ 2018 թվականը Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի կազմում գործող Համակարգող խորհուրդը եւ դրանից հետո Վարչապետի աշխատակազմի կազմում 2019 թվականին ստեղծված Ազգային փոքրամասնությունների խորհուրդն ընդգրկում էին էթնիկ խմբերի այնպիսի հասարակական կազմակերպություններ, որոնք ավելի շատ էին համապատասխանում ստորեւ նշված չափանիշներին, քան «11 խոշորագույն» կազմակերպությունները, որոնք ենթակա չեն որեւէ սահմանման», ինչպես նշված է Հինգերորդ կարծիքի տեքստում: Ուղիներին որպես ազգային փոքրամասնություն չգրանցելը պայմանավորված է համապատասխան իրավական մեխանիզմների բացակայությամբ: Հայաստանի Հանրապետությունում չկա ազգային փոքրամասնությունների մասին այնպիսի օրենք, որը կսահմանի ազգային փոքրամասնությունների գրանցման պահանջներն ու համապատասխան ընթացակարգերը: Հայաստանի Հանրապետությունում ճանաչված 11 ազգային փոքրամասնություններ որպես այդպիսիք հռչակվել են 2000 թվականին կայացած Ազգային փոքրամասնությունների կոնգրեսի նստաշրջանում: «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծն ընդունելուց հետո ազգային փոքրամասնությունների սահմանումն ու նրանց հետագա գրանցման գործընթացն ավելի հստակ կկանոնակարգվեն:

համեմատած Խորհրդում չներկայացված այլ փոքրամասնությունների հետ, ինչպիսիք են ուդիները, որոնք Խորհրդում ընդգրկվելու հայտ են ներկայացրել, որպեսզի, ի թիվս այլնի, հասանելիություն ունենան ֆինանսավորման որոշակի մակարդակին, սակայն տեղեկություններ կան այն մասին, որ նրանք տեղեկացվել են Խորհրդի անդամ լինելու համար հինգ տարվա գործունեության ապացույց ունենալու անհրաժեշտության մասին՝ հարցեր առաջացնելով Խորհրդի հնարավոր ներառականության վերաբերյալ՝ համաձայն թիվ 486-Լ որոշման դրույթների (տե՛ս 15-րդ հոդվածը): Համաձայն ներկայացված տեղեկությունների՝ ուդիները, լինելով Խորհրդի անդամ, գտնվում են իշխանությունների կողմից որպես ազգային փոքրամասնություն ճանաչվելու գործընթացում, եւ նրանք նույնպես նշում են, որ 2018 թվականին ուդիների գործունեությանը ֆինանսավորում է տրամադրվել, թեեւ նրանք ներառված չեն օրենքի նախագծի ցանկում:	
Բնակչության մարդահամար	
Պարբերություն 42 Բնակչության մարդահամարը, որը պետք է տեղի ունենար 2020 թվականին, հարկ եղավ հետաձգել, եւ այժմ այն տեղի կունենա 2022 թվականի հոկտեմբերի 13-	Հայաստանում վերջին մարդահամարն անցկացվել է 2022 թվականի հոկտեմբերի 13-22-ը՝ Եվրոպայի վիճակագրագետների համաժողովի՝ բնակչության 2020 թվականի մարդահամարի եւ բնակության պայմանների հաշվառման մասին հանձնարարականներին համապատասխան (ՄԱԿ-ի Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ, Նյու Յորք եւ Ժնեւ, 2015թ., https://unece.org/info/Statistics/pub/21844) եւ թիվ ECE/CES/41 փաստաթղթի հիմնական պահանջներին ու Հայաստանի Հանրապետության կառավարության

22-ը: Մարդահամարի ձեւաթղթի նախագծում ներկայացված են բաց հարցեր՝ էթնիկ եւ լեզվական պատկանելության վերաբերյալ, թեեւ հարցում անցկացնողները պատասխանները գրանցելու համար օգտվելու են ցանկից, եւ բազմակի էթնիկ պատկանելությունը հայտարարելու ոչ մի հնարավորություն չի լինելու: Իշխանությունները նշել են, որ մարդահամարի հարցումներ անցկացնող հավաքագրելիս նախապատվությունը տրվելու է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց:	2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1149-Ն որոշմամբ ընդունված Մարդահամարի ծրագրին (Հարցաշար) համապատասխան: Հայաստանի Հանրապետության 2022 թվականի մարդահամարի իրականացման համար առաջին անգամ ընտրվել է համակցված մեթոդ, այն է՝ հատուկ ծրագրային ապահովման ծրագրի միջոցով պետական ռեգիստրի տվյալները սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի եւ ընտրանքային հասցեների 25 տոկոսից մարդահամարի ծրագրով հավաքագրված տվյալների հետ համակցելու միջոցով: Մարդահամարի այս մեթոդաբանությունը, ինչպես եւ նախորդները՝ 2001 եւ 2011 թվականներին, հիմնված է ՄԱԿ-ի վերոհիշյալ առաջարկություններով սահմանված դրույթների վրա: Ազգային եւ (կամ) էթնիկ պատկանելության մասին հարցադրումը, համաձայն ՄԱԿ-ի վերոհիշյալ հանձնարարականի, հիմնական թեմա չէ, քանի որ այն ներառված է ոչ հիմնական թեմաների ցանկում, եւ մեկից ավելի էթնիկ պատկանելության վերաբերյալ տվյալների հավաքագրման անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված է երկրի ազգային կազմի առանձնահատկություններով, հավաքագրված անվանական տվյալները հրապարակելու հնարավորությունը բացառելու հանգամանքով (Գլուխ 1-ի «Գաղտնիություն եւ անվտանգություն» բաժին) եւ առկա ռեսուրսներով: Հայաստանի Հանրապետության 2022 թվականի մարդահամարի հարցաշարում միայն մեկ էթնիկ պատկանելություն ընտրելը պայմանավորված է ոչ միայն վերը նշվածով: Հաշվի է առնվում նաեւ այն հանգամանքը, որ հարցաշարում ներառված է նաեւ անձի կրոնական ծագման մասին հարց, որն ամբողջականացնում է հավաքագրված տեղեկությունները: Միեւնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ ազգային պատկանելության մասին տեղեկությունը հասանելի է Բնակչության պետական ռեգիստրի տվյալներում եւ ներառվել է նաեւ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի մարդահամարի ծրագրում:
Պարբերություն 43 Փոքրամասնությունների ներկայացուցիչները մտահոգություն են հայտնել մարդահամարի նախկին գործելակերպի վերաբերյալ, երբ մարդահամարն իրականացնող՝ հարցում անցկացնողները կարող էին սխալ	Անձի ազգային/էթնիկ պատկանելության եւ քաղաքացիության վերաբերյալ հարցերը հստակ կերպով տարբերակվում են 2001, 2011 եւ 2022 թվականների մարդահամարների անցկացման մեթոդաբանությամբ, որոնք ամրագրված են հարցաթերթիկների լրացման ցուցումներում եւ մեթոդական ուղեցույցներում: Դրանք չեն կարող սխալ մեկնաբանվել մարդահամարն իրականացնող անձանց կողմից, քանի որ մարդահամարի նպատակով հավաքագրված հաշվարարները, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն անցել են հատուկ ուսուցում/վերապատրաստում եւ գիտելիքների ստուգում, եւ նրանց աշխատանքները գործընթացի փաստացի արձանագրման-գրանցման ընթացքում վերահսկվել են հրահանգիչների կողմից: Ինչպես արվել է նախորդ մարդահամարների ժամանակ, հանրությանը տրվել են

մեկնաբանել եւ արձանագրել ազգային փոքրամասնությանը պատկանող անձի կողմից ազգության/էթնիկ պատկանելության վերաբերյալ հարցին որպես «հայ» պատասխանելուց հրաժարումը՝ հանգեցնելով ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց թվերի խեղաթյուրման: Այնուամենայնիվ, նրանք հայտնել են, որ ակնկալում են, որ այս մարդահամարում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց թիվը պետք է որ զգալիորեն նվազած լինի արտագաղթի պատճառով: Նրանք մատնանշել են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շրջանում ինքնորոշման հնարավորությունների մասին իրազեկության պակասը եւ նշել, որ դա կարող էր սխալ մեկնաբանվել որպես խուսափում Հայաստանի քաղաքացի ճանաչվելուց՝ դրանով իսկ որոշակի անհավատարմություն ցուցաբերելով երկրի նկատմամբ:	պարզաբանումներ զանգվածային լրատվության միջոցների եւ համացանցի միջոցով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի մարդահամարը լուսաբանող պաստառների եւ բրոշյուրների միջոցով: Նյութերը ներառում էին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների ձեւաչափեր, գրավոր պարզաբանումներ՝ նրանց, մասնավորապես՝ եզդի եւ քուրդ փոքրամասնությունների ղեկավարների համար:
Պարբերություններ 44-45 …իշխանություններին հիշեցնում է, որ մարդահամարի համար նախատեսված՝ էթնիկ պատկանելության եւ լեզվի վերաբերյալ հարցերին տրվող հավանական պատասխանների ցանկը պետք է լինի բաց, այլ ոչ փակ:	Ինչպես նշվեց, 2022 թվականի Մարդահամարի ծրագիրը հաստատվել է 2022 թվականի հուլիսի 28-ին, եւ ազգային/էթնիկ ծագման եւ լեզուների վերաբերյալ հարցերը եղել են բաց հարցեր, իսկ ընտրանքային հարցումներում ներգրավված անձինք ազատ են եղել ընտրելու իրենց ազգությունը եւ լեզուն, ինչպես նաեւ հնարավորություն են ունեցել օգտվելու այդ հարցերին պատասխանելուց հրաժարվելու իրենց իրավունքից («Պաշտոնական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 15-րդ մաս): Կանոնավոր ցուցումների կատարման որակն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով 2022 թվականի մարդահամարի անցկացման մեջ ներգրավված անձնակազմի ուսուցման համար մշակվել են հատուկ էլեկտրոնային ուղեցույցներ: Ուղեցույցները ներառել են ինչպես հարցաթերթիկը լրացնելու, այնպես էլ էլեկտրոնային սարքերի (պլանշետների) միջոցով պատասխանները լրացնելու կարգը:

Խտրականության դեմ պայքարի օրենսդրական եւ ինստիտուցիոնալ շրջանակ	
Պարբերություն 51 … 2019 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ Կառավարությունը հաստատել է Մարդու իրավունքների պաշտպանության 2019-2023 թվականների ազգային ռազմավարությունը:	Հայաստանի Հանրապետության՝ Մարդու իրավունքների պաշտպանության նշված ռազմավարությունն ընդունվել է 2020-2022 թվականներին: Փաստաթուղթը կարելի է գտնել հետեւյալ հղմամբ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=159241 (հասանելի է հայերենով)
Իրավահավասարության վերաբերյալ տվյալներ	
Պարբերություն 57 … Պետական զեկույցում տրամադրված չեն կոնկրետ տվյալներ՝ ավելի թարմ, քան 2011 թվականի մարդահամարի ժամանակ ստացված տեղեկություններն են՝ ըստ էթնիկ պատկանելության: Բացակայում են մշտապես առկա տվյալները՝ ըստ տարիքի, սեռի եւ աշխարհագրական բաշխվածության, հատկապես կրթության, զբաղվածության, առողջապահական ծառայությունների, սոցիալական ապահովության ծառայությունների շահառուների, ազգային փոքրամասնություններին պատկանող կանանց եւ երեխաների նկատմամբ կիրառվող ընտանեկան բռնության ոլորտներում:	2021 թվականին Հայաստանի վիճակագրական կոմիտեն (ԱՐՄՍՏԱՏ) «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՍՊԸ-ի հետ համագործակցության շրջանակներում հարցում է անցկացրել կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ (տե՛ս https://armstat.am/en/?nid=82&id=2487)՝ օգտվելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկվող մեթոդաբանությունից: Հավաքագրված տեղեկություններում ներառված են եղել տվյալներ նաեւ 1559 տարվա վաղեմություն ունեցող էթնիկ փոքրամասնությունների կանանց վերաբերյալ, սակայն շատ նվազ թվով դեպքերի պատճառով վիճակագրությունը չի ներկայացվել հետազոտության ամփոփ վերլուծական զեկույցում՝ որպես տարանջատված տվյալ:
Աջակցություն ազգային փոքրամասնությունների մշակույթներին	
Պարբերություն 63 … Հույն փոքրամասնությունը խնդրել է պոնտական հունարենը ներառել ոչ	Ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության եւ մշակույթի պահպանումը, տարածումը եւ զարգացումը Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականության առաջնահերթություններից է: 2019 թվականին Հայաստանում ավարտվել է աշխարհի ամենամեծ եզդիական տաճարի՝ Մալաք Թավուսի եւ

նյութական մշակութային ժառանգության ցանկում, իսկ Հանքավան գյուղում (Կոտայքի մարզ) գտնվող իր եկեղեցուն տալ հուշարձանի կարգավիճակ: Տեղեկություններ են ստացվել նաեւ այն մասին, որ եզդիները ֆինանսավորում չեն ստանում իրենց սրբավայրերի կամ տաճարների կառուցման համար: Ուդիներին պատկանող անձինք նույնպես ափսոսանք են հայտնել այն մասին, որ ֆինանսավորումը հիմնականում հասանելի է եղել Խորհրդի միջոցով, եւ որ 2018 թվականին իրենց մշակութային միջոցառումներին ցուցաբերված աջակցությունը եղել է չնչին:	Յոթ հրեշտակների շինարարությունը: Սպիտակ գրանիտից եւ մարմարից յոթ գմբեթներով տաճարը կառուցվել է մայրաքաղաք Երեւանից 35 կիլոմետր հեռավորության վրա գտնվող եզդիական փոքրիկ Ակնալիճ գյուղում: 25 մետր բարձրությամբ տաճարն ունի մեծ աղոթասրահ, կրոնական դպրոց եւ թանգարան: Յոթ գմբեթները խորհրդանշում են եզդիական հավատքի յոթ սրբերին: Տաճարի օծման արարողությունը տեղի է ունեցել 2018 թվականի սեպտեմբերի 29-ին՝ բոլոր եզդիների հոգեւոր առաջնորդի գլխավորությամբ, իսկ բացման արարողությունը տեղի է ունեցել 2019 թվականի սեպտեմբերի 29-ին, որին մասնակցել են հազարավոր եզդիներ աշխարհի տարբեր ծայրերից: Եզդիների, ասորիների եւ հրեաների ցեղասպանության զոհերի հուշարձանները տեղադրված են Երեւանի Օղակաձեւ այգու տարբեր հատվածներում, որտեղ պարբերաբար հարգանքի տուրք է մատուցվում:
Պարբերություն 64 … եզդիների ներկայացուցիչներն ափսոսանք են հայտնել այն մասին, որ ընդհանուր առմամբ իրենց մշակույթին եւ փոքրամասնությանն աջակցելու համար իշխանությունների կողմից իրականացվող աշխատանքի մեծ մասը սահմանափակվում էր պարի եւ երգի բանահյուսական արտահայտություններով, այլ ոչ թե այլ հիմնական ոլորտների անդրադառնալու համար ֆինանսավորում տրամադրելով: … փոքրամասնությունները հայտարարել են, որ իրենց մշակույթը պահպանելու եւ զարգացնելու ուղղությամբ Հայաստանի կողմից գործադրվող ջանքերը ողջունելի են, բայց, ամենայն հավանականությամբ, այս անհետացումից խուսափել չի լինի:	Պետական բյուջեից Հայաստանի ազգային փոքրամասնությունների կազմակերպություններին տարեկան հատկացվող պետական միջոցները բաշխվում են 11 ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված Ազգային փոքրամասնությունների խորհրդի հաստատմամբ եւ նրանց բոլորի հետ քննարկելուց հետո: Այս մոտեցումն ապահովում է բաշխման գործընթացի եւ՛ տեղեկացվածությունը, եւ՛ թափանցիկությունը: Քանի որ մշակութային գործունեության շրջանակն ավելի մեծ է, քան այլ ոլորտների շրջանակը, ապա մշակույթին ուղղված ծախսերը գերակշռում են, երբ խոսքը վերաբերում է ըստ ոլորտների միջոցների բաշխմանը: Ֆինանսավորման բաշխման մեթոդաբանությունը կարող է վերանայվել ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների խնդրանքով՝ ընդգրկելու համար գործունեության ավելի լայն շրջանակ: Ինչ վերաբերում է փոքր համայնքների ներկայացուցիչների թվի նվազմանը, ապա դա մեծապես կախված է ինչպես տարածաշրջանի անվտանգության վիճակից, այնպես էլ Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման հետեւանքով պայմանավորված տնտեսական իրավիճակից:

...փոքր համայնքների ներկայացուցիչների թվի նվազման մասով: ...Հայ առաքելական եկեղեցում հունական համայնքի ներկայացուցիչների մկրտության հարցի առնչությամբ:	Հայ Առաքելական եկեղեցում հունական համայնքի ներկայացուցիչների մկրտության հարցի վերաբերյալ կարելի է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում տիրող վերոնշյալ պայմանները, 1991 թվականից սկսած, նպաստել են արդեն փոքր էթնիկ խմբերի եւ մասնավորապես հունական համայնքի միգրացիային (արտագաղթին), որոնք թողել են իրենց ավանդական բնակավայրերը, որտեղ նրանք ունեցել են իրենց եկեղեցիները:
Միջմշակութային երկխոսություն	
Պարբերություն 79 ... Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ակտիվ քայլեր ձեռնարկելու հասարակության մեջ Հայաստանի էթնիկ բազմազանության եւ ազգային փոքրամասնությունների մշակույթի, պատմության, ավանդույթների, կրոնների եւ լեզուների մասին իրազեկության մակարդակը բարձրացնելու, էթնիկ եւ կրոնական կարծրատիպերի դեմ պայքարելու եւ միջմշակութային երկխոսության համար անհրաժեշտ պայմանները խթանելու համար:	Հանրակրթական դպրոցների 5-րդ դասարանում «Ես եւ իմ հայրենիքը» առարկան նպաստում է Հայաստանի ազգային փոքրամասնությունների պատմության, լեզվի, մշակույթի ուսումնասիրությանը: Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության «Կրթության զարգացման եւ նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամը նախաձեռնել է միջոցառումների շարք՝ նվիրված Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ավանդույթների եւ տոների խթանմանը: Ծրագիրն իրականացվելու է ազգային փոքրամասնությունների համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:
Պաշտպանություն գենդերային հիմքով բռնությունից	
Պարբերություն 82 ....Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի խոսքերով՝ «ընտանեկան բռնությունը շարունակում է մնալ լուրջ, տարածված եւ որոշ չափով դեռեւս թերագնահատված երեւույթ Հայաստանում».	Ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարելու համար Հայաստանի ոստիկանությունն առաջնահերթություն է տալիս ինչպես բռնության կանխարգելմանը, այնպես էլ ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանությանը՝ ապահովելով նրանց անվտանգությունը՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, սեփականության կարգավիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ այլ անձնական կամ սոցիալական հանգամանքներից:

....Խորհրդատվական կոմիտեի զրուցակիցների կարծիքով՝ ազգային փոքրամասնությունների համայնքների համար նույնպես տարածված խնդիր է ընտանեկան բռնությունը, որին ենթարկվում են հատկապես կանայք եւ երեխաները:	Ոստիկանությունում չեն ստացվել հատուկ էթնիկ փոքրամասնություններին պատկանող կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ հաղորդումներ:
Պարբերություն 84 ... Խորհրդատվական կոմիտեն վերահաստատում է իր մտահոգությունը վաղաժամ եւ հարկադիր ամուսնությունների վնասակար հետեւանքների վերաբերյալ, որոնք լայնորեն ճանաչվում են որպես վնասակար երեւույթ, որը խախտում, չարաշահում կամ խաթարում է մարդու իրավունքները, եւ կապված են այլ վնասակար երեւույթների եւ մարդու իրավունքների խախտումների հետ ու արմատավորում են այդ երեւույթները: Այս հարցը խոչընդոտում է նաեւ կրթության իրավունքը, որով օժտված է յուրաքանչյուր երեխա:	Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերումը ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման իրավասու ծառայողների պատասխանատվության շրջանակում է, որոնք այս հարցում համագործակցում են հանրակրթական դպրոցների, Խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովների, ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության վարչությունների, երկրի մարզերի վարչակազմերի հանրակրթության վարչությունների հետ: Ոստիկանության ծառայողների պարտականությունները ներառում են կանխարգելիչ բնույթի զրույցներ ընդհանուր կրթությունից դուրս մնացած երեխաների, ինչպես նաեւ նրանց ծնողների եւ օրինական ներկայացուցիչների հետ: Միաժամանակ ոստիկանության իրավասու ծառայողներն այցելում են վարչական շրջաններ եւ կանխարգելիչ բացատրական աշխատանքներ են իրականացնում բնակչության, այդ թվում՝ անչափահասների հետ: Դպրոցական տարիքի այն երեխաները, որոնք պարբերաբար բացակայել են դասերից եւ դրսեւորել կասկածելի վարքագիծ, հայտնվում են հատուկ ուշադրության կենտրոնում, եւ նրանց առաջարկվում է հատուկ կրթական գործունեություն:
Ատելության խոսք եւ ատելության շարժառիթով կատարվող հանցագործություն	
Պարբերություն 92 ... ինչ վերաբերում է Խորհրդատվական կոմիտեի այն եզրակացությանը, որ ռասայական խտրականությունը պետք է դիտվի որպես հանցագործության ծանրացնող հանգամանք, իսկ Հայաստանի Հանրապետության	Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի 71-րդ հոդվածը, որով սահմանվում են քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանքները, սահմանում է, ի թիվս այլնի, ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթներով հանցագործության կատարումը՝ պայմանավորված ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագմամբ, կրոնական, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով՝ որպես պատիժը եւ պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ: Հարկ է հստակ ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի շրջանակներում ռասայական խտրականության շարժառիթով

քրեական նոր օրենսգրքով նշված ծանրացնող հանգամանքը վերաբերում է միայն սպառիչ կերպով թվարկված որոշ հանցագործություններին:	կատարված բոլոր հանցագործությունների համար պատիժ նշանակելիս դատարանը կարող է այդ շարժառիթը համարել որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանք: Այսպիսով, խնդրի լուծման համար Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքով հստակ գործիքակազմ է սահմանվել:
Պարբերություն 96 Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին հորդորում է ստեղծել ատելության շարժառիթով հանցագործությունների եւ ատելության խոսքի վերաբերյալ տվյալների հավաքագրման համապարփակ համակարգ՝ վիրավորանքի եւ ատելության շարժառիթների վերաբերյալ ամբողջությամբ տարանջատված տվյալներով՝ դրանով իսկ թույլ տալով գնահատել ազգային փոքրամասնությունների վրա ազդեցությունն ու այդ երեւույթներին արձագանքելու համար իշխանությունների կողմից գործադրված ջանքերը:	Ներկայումս Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն առանձին չի գրանցում ատելության շարժառիթով կատարված հանցագործությունները: Միաժամանակ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում կան որոշակի դրույթներ, որոնք վերաբերում են ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ թշնամանքի շարժառիթներով հանցագործության կատարմանը, որով եւ կատարվում է համապատասխան հաշվարկը:
Կրոնի ազատություն	
Պարբերություն 108 ... Խորհրդատվական կոմիտեն վերահաստատում է, որ պաշտամունքի վայրերի արդյունավետ հասանելիությունը կրոնի դրսեւորման առանցքային բաղադրիչ է այդ թվում նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն: Այս	Ասորական «Խայադթա» ՀԿ-ի նախագահ Ի. Գասպարյանը եւ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի բաժինը պայմանավորվածություն են ձեռք բերել Հայաստանի Արարատի մարզպետի հետ եկեղեցու վերանորոգման աշխատանքները դադարեցնելու վերաբերյալ մինչեւ դատարանի վերջնական որոշման ընդունումը:

կապակցությամբ այն ափսոսանք է հայտնում, որ իշխանությունները չեն ձեռնարկել որեւէ գործողություն, որ հետաձգեն եկեղեցու վերակառուցման աշխատանքները՝ Հայ Առաքելական եկեղեցու խորհրդանիշների տեղադրմամբ, որոնք շարունակվում են նույնիսկ այն ժամանակ, երբ դատական գործը քննվում է Վերաքննիչ քաղաքացիական դատարանում: Իշխանությունները պետք է ձգտեն ապահովել, որ ասորական փոքրամասնության՝ իրենց կրոնի ազատ արտահայտման իրավունքը հարգվի:	
Ազգային փոքրամասնությունները եւ լրատվամիջոցները	
Պարբերություն 110 Օրենքի համաձայն՝ հանրային հեռուստատեսությունը եւ ռադիոն պետք է որոշակի եթերային ժամանակ տրամադրեն Հայաստանի ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի եւ լեզուների մասին հաղորդումների հեռարձակման համար:	Կարծիքում նշված «Ազգային համեր» եւ «Կողք կողքի» հաղորդումներից բացի՝ Հ1 հեռուստաալիքով հեռարձակվում է Հայաստանի Հանրապետության 11 ազգային փոքրամասնություններին նվիրված հաղորդում՝ «Ամբողջի մի մասը» խորագրով:
Միջմշակութային կրթություն	
Պարբերություն 133 ...Իշխանությունները չեն հայտնել միջմշակութային կրթությունն ուսումնական ծրագրերի, ուսուցիչների վերապատրաստման կամ դասագրքերի կամ այլ ռեսուրսների միջոցով խթանելուն	2021 թվականի փետրվարի 4-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր թիվ 136-Ն որոշմամբ հաստատել է հանրակրթության նոր պետական չափորոշիչները, որոնք սահմանում են հանրակրթության տարրական, հիմնական եւ միջնակարգ ծրագրերի ակնկալվող արդյունքները: Այդ արդյունքները ներառում են նաեւ ազգային փոքրամասնությունների ուսանողներին ներկայացվող պահանջները, որպեսզի վերջիններս կարողանան հաղորդակցվել, գրել եւ կարդալ իրենց ազգային լեզվով, ճանաչել եւ ներկայացնել իրենց մշակույթը:

ուղղված էական նախաձեռնությունների մասին, սակայն նրանք տեղեկացրել են Կոմիտեին, որ Տավուշի մարզում փորձնական եղանակով իրականացվում է նոր ուսումնական ծրագիր, որը ներառում է տեղեկություններ Հայաստանում ազգային փոքրամասնությունների մասին՝ դրա նախապես սահմանված նպատակներին համապատասխան:	
Կրթության մատչելիության արդյունավետ իրավունք	
Պարբերություններ 138, 144, 147 ...12(3) հոդվածի համաձայն՝ պետք է ապահովել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար բոլոր մակարդակներով կրթության մատչելիության հավասար հնարավորություններ:	Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործողությունների ծրագրով, բարձրագույն կրթության ոլորտին առնչվող եզրակացություններին եւ առաջարկություններին համապատասխան, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության բակալավրիատի (ներառյալ՝ շարունակական եւ ինտեգրված կրթական ծրագրերի) համար հատկացվում է տարեկան մինչեւ 7 անվճար ուսման տեղ:
Պարբերություններ 140, 144 ... Միջազգային կազմակերպությունները, այդ թվում՝ ՄԱԿ-ի՝ Ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեն, ՄԱԿ-ի՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն եւ այլք, շարունակում են բարձրացնել Հայաստանում փոքրամասնությունների խմբերի շրջանում կրթությունից դուրս մնացած աշակերտների հարցը:	Ներկայումս հանրային քննարկման եւ դիտարկման է ներկայացվել պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների նույնականացման եւ ուղղորդման նոր կարգը: Այն ուղղված է «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների նույնականացում» կոչվող էլեկտրոնային ենթահամակարգի կատարելագործմանը, դպրոցահասակ երեխաների հաշվառման գործընթացի կարգավորմանը, երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու գործընթացում տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պատասխանատու բոլոր կառույցների ու շահագրգիռ մարմինների պարտավորությունների շրջանակի հստակեցմանը:

Փոքրամասնության լեզվի ուսուցում	
Պարբերություն 148 .նյութերի հետ կապված՝ իշխանությունները հայտնում են, որ ասորերենի դասավանդման համար դասագրքերը կազմվում են համայնքի կողմից, եւ Խորհրդատվական կոմիտեն անձամբ է տեսել վերջերս վերահրատարակված դասագրքերը, այդ թվում՝ այբբենարան ասորերենի համար (վերահրատարակված 2019 թվականին):	Ասորերենի դասագրքերը մշակվում են ասորական համայնքի համապատասխան փորձագետների կողմից, այնուհետեւ հրատարակվում ու վերահրատարակվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: 2020-2021 թվականներին ասորական համայնքին որպես Ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամ մրցութային հիմունքներով հնարավորություն է ընձեռվել մշակելու հանրակրթական դպրոցների 1-4-րդ դասարանների համար ասորերենի դասագրքերի նաեւ էլեկտրոնային տարբերակները եւ դրանք տեղադրելու համապատասխան էլեկտրոնային հարթակում (https://schoolbooks.am/#/groups.):
Պարբերություն 149 Փոքրամասնությունների լեզուներով ուսուցում իրականացնող նախադպրոցական հաստատությունների մասին սահմանափակ տեղեկություններ են տրամադրվել Խորհրդատվական կոմիտեին, սակայն այն տեղեկացվել է եռալեզու (հայերեն, ռուսերեն եւ ասորերեն) մանկապարտեզի մասին, որը հիմնվել է Վերին Դվին գյուղում (Արարատի մարզ): Համալսարանում փոքրամասնությունների լեզուները կարող են ամենից հաճախ ուսումնասիրվել որպես օտար լեզուներ (հատկապես գերմաներենը, հունարենը եւ ուկրաիներենը), սակայն ասորերենը չի կարող ուսումնասիրվել:	Համալսարաններում որպես օտար լեզուներ ուսումնասիրվող՝ փոքրամասնությունների թվարկված լեզուներից են նաեւ ռուսերենը, լեհերենը եւ եբրայերենը:

Պարբերություն 151 Խորհրդատվական կոմիտեի զրուցակիցները տեղեկացրել են, որ փոքրամասնությունների լեզուների ուսուցումը կարող է իրականացվել նաեւ «կիրակնօրյա դպրոցների» ձեւով, որոնք կազմակերպվում են Ազգային փոքրամասնությունների խորհրդի սենքերում կամ հենց փոքրամասնությունների հաստատություններում: Սա փոքրամասնությունների կողմից փոքրաթիվ աշակերտներով իրականացվող արտադասարանական նախաձեռնություն է՝ պահպանելու եւ փոխանցելու իրենց փոքրամասնության լեզուն (7-ը սովորում են բելառուսերեն), եւ այս դասերն այժմ իրականացվում են առցանց՝ կորոնավիրուսային համաճարակի պատճառով: Գերմանական փոքրամասնությունը նույնպես հայտնել է, որ լեզուն դասավանդվում է դասերի եւ Աստվածաշնչի ուսումնասիրության, ինչպես նաեւ ժողովրդական երաժշտության միջոցով: Այնուհետեւ զեկուցվել է, որ դա հաճախ փոքրամասնությունների կողմից իրականացվում է կամավոր կերպով: Ասորիները նշել են, որ նախկինում դպրոցներում ասորերենով ուսուցանվող որոշ բաժիններ գտնվել են փակվելու վտանգի տակ, այդ թվում նաեւ	Ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցումն իրականացվում է նաեւ «Կիրակնօրյա դպրոցների» ձեւաչափով կազմակերպվող վերապատրաստման դասընթացների միջոցով, որոնք անցկացվում են Ազգային փոքրամասնությունների կրթամշակութային կենտրոնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցությամբ:

ուսուցիչների պատրաստվածության որակի պատճառով:	
Պարբերություն 154 Խորհրդատվական կոմիտեն ընդգծում է թարմացված եւ որակյալ դասագրքերի կարեւորությունը՝ որպես փոքրամասնությունների լեզուների ուսուցման անբաժանելի մաս: Այն բարձր է գնահատում ասորի փոքրամասնության ջանքերը՝ ապահովելու իրենց դասագրքերի շարունակական հրատարակումը: Այնուամենայնիվ, այն ցանկանում է հիշեցնել իշխանություններին Շրջանակային կոնվենցիայով նախատեսված՝ փոքրամասնությունների լեզուներով սովորող ուսանողների եւ աշակերտների համար ուսումնական նյութերի հասանելիություն ապահովելու մասով իր պարտավորությունների մասին:	Ամեն տարի Հայաստանի պետական բյուջեից հատկացվող միջոցների հաշվին վերահրատարակվում են եզդիերեն եւ քրդերեն դասագրքեր եւ անվճար տրամադրվում ուսանողներին: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար հրատարակված դասագրքերի եւ առարկայական ծրագրերի էլեկտրոնային տարբերակները հասանելի են նաեւ «Հայկական կրթական միջավայր» պորտալի «Պաշարների շտեմարան» կայքում (http://lib.armedu.am): Համայնքային ասորերենի ուսուցումը կազմակերպվում է համայնքի ներկայացուցիչների ներգրավմամբ, որոնք նույնպես մասնակցում են դասագրքերի մշակմանը: Միաժամանակ, համաձայն Ազգային ժողովի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենքի նախագծի, թե՛ տպագիր եւ թե՛ էլեկտրոնային տարբերակով, հայերենով եւ էթնիկ փոքրամասնությունների լեզվով կրթական ռեսուրսների եւ գրականության որակական բարելավումը որակյալ կրթության առաջնահերթություններից է եւ պետք է իրականացվի:
Եզդիերենի ուսուցում	
Պարբերություն 158 ...Եզդիների ներկայացուցիչները Կոմիտեին հայտնել են իրենց դժգոհության մասին, որ իրենց լեզվի ուսուցումն ընդհանուր առմամբ հասանելի է ոչ ֆորմալ, սովորական ժամաքանակից դուրս ընտրովի դասերի ձեւով՝ շաբաթական մեկ կամ երկու ժամով, եւ ընդգծել են եզդիերենով մասնագիտական, մեծահասակների եւ	Ազգային փոքրամասնություններին պատկանող ուսուցիչները կատարելագործման նպատակով իրականացվող վերապատրաստման դասընթացներին մասնակցում են նույն ձեւով, ինչպես մյուս ուսուցիչները:

շարունակական կրթության ավելի մեծ առաջարկի անհրաժեշտությունը:	
Պարբերություն 160 Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ փոքրամասնությունների լեզուների ուսուցումը, որպես ընտրովի առարկա, բավարար չափով չի խրախուսում փոքրամասնություններին պատկանող աշակերտներին սովորելու իրենց փոքրամասնության լեզուն: Հետեւաբար Խորհրդատվական կոմիտեն ափսոսանք է հայտնում՝ կապված այն բանի հետ, որ եզդիերենը շարունակում է ընդհանուր ուսումնական ծրագրից դուրս լինել, ինչպես նաեւ այն բանի հետ, որ դրան շարունակում են տեղ հատկացնել դպրոցական դասացուցակի վերջում:	Եզդիական պարփակ բնակավայրերում, որտեղ դպրոցներն ունեն որոշակի թվով աշակերտներ, եզդիերենը դպրոցական ծրագրի մի մաս է կազմում: Եզդիերենով ուսուցման համար միջոցների հատկացումը պայմանավորված է դպրոց այցելող աշակերտների թվով:
Տարածքային եւ վարչական բարեփոխումներ	
Պարբերություն 187 ...Իշխանությունները նաեւ նշում են, որ այս համախմբման առավելությունը ֆինանսավորման ավելացումն է:	Իրավիճակն ավելի լավ արտացոլելու համար առաջարկվում է հետեւյալ ձեւակերպումը. .«համախմբել ռեսուրսները, ներառյալ՝ ֆինանսական ռեսուրսները, եւ բնակչությանը մատուցել ավելի որակյալ ծառայություններ»:
Երկկողմ եւ բազմակողմ հարաբերություններ	
Պարբերություն 194 . Խորհրդատվական կոմիտեն վերահաստատում է ազգային փոքրամասնությունների պաշտպանության հետ կապված երկկողմ եւ բազմակողմ պայմանավորվածությունների	Ազգային փոքրամասնությունների խորհուրդը հաշվի է առնում, որ Հայաստանի եզդիական, քրդական եւ ասորական համայնքները չունեն «մայր պետություն», մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է Հայաստանի պետական բյուջեից հատկացվող միջոցների բաշխմանը: Ընդհանուր առմամբ, «մայր պետություն» չունեցող ազգային փոքրամասնությունները Հայաստանում գտնվում են հատուկ խնամքի եւ պաշտպանության ներքո, եւ դա ազգային փոքրամասնությունների իրավունքների մասով պետական քաղաքականության գերակայությունն է:

կարեւորությունը, սակայն վերահաստատում է, որ դա չպետք է փոխարինի ակտիվ պետական աջակցությանը: Բացի այդ, այն զգուշացնում է, որ «մայր պետության» աջակցության վրա հույս դնելը կարող է հանգեցնել մի իրավիճակի, երբ «մայր պետություն» չունեցողները կհայտնվեն ոչ բարենպաստ իրավիճակում: Հետեւաբար, թեեւ Խորհրդատվական կոմիտեն ողջունում է ազգային փոքրամասնությունների՝ առանց խոչընդոտների համագործակցությունը եւ նրանց ֆինանսավորումն արտասահմանից, այն ափսոսանք է հայտնում այն անհամապատասխանությունների առնչությամբ, որոնք այդ իրավիճակը կարող է ստեղծել փոքրամասնությունների պաշտպանության հարցում:	